Թեղենյաց վանք

Վանքը գտնվում է Բուժական գյուղից հյուսիս՝ անտառապատ լեռան լանջին։
Հիմնվել է վաղ միջնադարում։ Առաջին անգամ հիշատակվում է VIII դ. սկզբին՝ Վահան Գողթնացու՝ վանքում ապաստանելու կապակցությամբ։ XI–XIV դդ. վանքը եղել է կրթության և գրչության կենտրոն։ Վանքի Կաթողիկե եկեղեցին կառուցվել է XII դ.-ում։ Գեղարվեստական արժեք է ներկայացնում կենտրոնական սալաքարի վրայի սիրամարգի պատկերաքանդակը՝ բացված պոչով, կիսաբաց թևերով, գլուխն աջ թեքած, և այս բոլորը ներկալված է բազմաժապավեն շրջագծի մեջ։
XIII դ. վանքում գործել են Վանական Վարդապետը և Վարդան Արևելցին, որը հիմնել է Թեղենյաց մենաստանի դպրոցը։ Կաթողիկե եկեղեցուն հարավից կից է գրատունը՝ արլևելյան կողմում գրիչների համար նախատեսված չորս խցերով, իսկ գավթին հյուսիսից կից է քառախորան մի շինություն, որը ենթադրաբար ծառայել է որպես մատենադարան։ Վանական համալիրի հյուսիս-արևմտյան կողմում առանձին կանգնած է սեղանատունը (XIIIդ.), արևմտյան կողմում՝ վանքի գերեզմանատունը։ 1827-ին Թեղենյաց վանքը հիմնովին ավերվել է երկրաշարժից։